ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2012թ. հունիսի 27-ի նիստի

Գիտական խորհրդի 32 անդամներից ներկա էին 27-ը: Նախագահում էր գիտխորհրդի նախագահ Գ. Ղազինյանը, քարտուղարում՝ գիտական խորհրդի քարտուղար Տ. Դավթյանը: Քվորումը ստուգելուց հետո գիտխորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգի հարցերի քննարկմանը:

Օրակարգ.

1. Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, դոց. Ս. Դիլբանդյան):
2. Իրավագիտության ֆակուլտետի 2011-12 ուս. տարվա ԳՀԱ հաշվետվության և 2012-13 ուս. տարվա ԳՀԱ ծրագրի հաստատման մասին (զեկ.՝ գիտքարտուղար, դոց. Տ. Դավթյան, ամբիոնների վարիչներ):
3. 2012-13 ուսումնական տարվա ամբիոնային և անհատական ծանրաբեռնվածությունների հաստատման մասին (զեկ.՝ Ա. Պետրոսյան, ամբիոնների վարիչներ):
4. 2011-12 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփման մասին (զեկ.՝ դեկանի տեղակալ, ի.գ.դ. Հ. Խաչիկյան):
5. Ընթացիկ հարցեր :

1. ԼՍԵՑԻՆ. Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, դոց. Ս. Դիլբանդյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Վաղարշյանը, Ռ. Եղյանը, Ա. Գաբուզյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի կատարած աշխատանքների մասին հաշվետվությունն ընդունել ի գիտություն, իսկ հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի կատարած աշխատանքը գնահատել դրական:

2. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի 2011-12 ուս. տարվա ԳՀԱ հաշվետվության և 2012-13 ուս. տարվա ԳՀԱ ծրագրի հաստատման մասին (զեկ.՝ գիտքարտուղար, դոց. Տ. Դավթյան, ամբիոնների վարիչներ):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Ա. Գաբուզյանը, Վ. Քոչարյանը, Տ. Բարսեղյանը, Ա. Վաղարշյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 2011-2012 ուս տարվա ԳՀԱ հաշվետվություններն ընդունել ի գիտություն,

բ/ հաստատել իրավագիտության ֆակուլտետի 2012-2013 ուս տարվա ԳՀԱ ծրագիրը,

գ/ հանձնարարել ամբիոններին՝ գործուն քայլեր ձեռնարկել 2012-2013 ուս տարվա ԳՀԱ ներկայացրած ծրագրերի իրականացման ուղղությամբ, միաժամանակ, գիտահետազոտական հետագա աշխատանքների ծրագրումն իրականացնել առաջին հերթին ամբիոնի առարկաները ուսումնական և ուսումնաօժանդակ գրականությամբ ապահովելու չափանիշից ելնելով:

3. ԼՍԵՑԻՆ. 2012-13 ուսումնական տարվա ամբիոնային և անհատական ծանրաբեռնվածությունների հաստատման մասին (զեկ.՝ Ա. Պետրոսյան, ամբիոնների վարիչներ):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Տ. Բարսեղյանը, Ա. Վաղարշյանը, Ս. Դիլբանդյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. 2012-2013 ուսումնական տարվա ամբիոնային և անհատական ծանրաբեռնվածությունների հաստատման հարցին անդրադառնալ գիտական խորհրդի առաջիկա նիստում:

4. 2011-12 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփման մասին (զեկ.՝ դեկանի տեղակալ, ի.գ.դ. Հ. Խաչիկյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Տ. Բարսեղյանը, Ա. Վաղարշյանը, Ս. Դիլբանդյանը, Ա. Գաբուզյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. 2011-12 ուս. տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփման վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն :

Խորհրդի նախագահ *Գ. Ղազինյան*

Խորհրդի քարտուղար *Տ. Դավթյան*